

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

661

8 (47)-x
64-65

ՀԱՅ ՊՐԱԴԱՐԱՆ 1
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՊՐՈԼԵՏԱՐՈՎՆԵՐԻ
«ՔՈՒՐԱ» ԽՄԱԿ ՑՈՒԹՅԱՆ

8 (47)

(2-65)

ԱՃԻԱՏԱՆՔ
———— ՅԵՎ
ՊԱՅՔԱՐ

Գ. ՍԱՆԻԿՈՎ, Ն. ՊՈԼԵՏԱՅԵՎ, Ե. ՎԵՐ-
ԶԱՐՆ, ՈՒ. ՈՅՏՄԵՆ, Գ. ՀԱՅԿՈՒԽԻ, Զ. ՀԱ-
ԿՈԲՅԱՆ, ՍԻՐԱՆ, Գ. ԶԵՂԴ, ՅԵ. ՄԱՐՏԻ-
ՐՈՍՅԱՆ.

19 ՄՈՍԿՎԱ 24

24 MAY 2005

Ն ՊՐՈԼԵՏԱՐԻԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ 1
12 OCT 2009


8 (47) -
4-65
u

ԱՇԽԱՏԱՆՔ

ՅԵՎ

ՊԱՅՔԱՐ

$$\begin{array}{r} 1001 \\ \hline 305 \end{array}$$



ՄՈՍԿՎԱ և ԱՄԵՐԻԿԱ 1924

ՄՈՍԿՎԱ

1924

Գ. ՍԱՆՆԻԿՈՂ**ԱՅՆ ԳԻՇԵՐԸ****Թարգմ. Տ. Ա.**

Ահագին, յերկաթե մի գերեզմանոց յես տեսա,
 Քաղաքից դուրս, ցանկի մեջ ընդարձակ.
 Կանգնել եյին շոգեշարժները շարքերով մրածեփ,
 Բնի մեջ՝ կաշկանդված։
 Իսկ նրանց հանդիպակ, ինչպես մի տաճար թափուր,
 Տիւրադեմ, ծառանում եր կեղտաթոր դեպոն.
 Բանվորները՝ գործաթող, հանգցրել հնոցներ՝
 Գնացել եյին կովի։

Գնացե՛լ եյին...

Յեվ թափուր, ձգվում եյին յերկարորեն որերը,
Զե՛ր աղմկում յերկաթը, չե՛ռ շաշում,
Զեյին բաղսում կռաններ,
Աւ անձրե՛վը միայն, ներկավառ, թափանցող՝
Այդ մեռելային,
Բայց, մոայլորեն զորություն ներշնչող
Գերեզմանոցի վրա ահագին՝
Տեղում եր, յերկա՛ր, յերկար ու համառ:
Յեվ ահա, չե՛մ հիշում՝ արդյոք յերազում տեսա,
Թե ամեն ինչ կատարվեց իրոք.—
Մի խուլ գիշեր եր աշնանային,
Գերեզմանոցի վրա՝ կար թանձը մի անդորր:
Կանզնե՛լ եյին շոգեշարժերն անշշուկ.
Ու փոշին խավարի՝ իրենց մեջ թաքուն,
Յերկաթե սարսափով սառնահար,
Նայում եյին գաշտերը՝ ակնապիշ.
Յեվ հանկարծ՝ շշակ.—
Մեռեների վրա՝ շշակն ահականչ,
Կալանչեց հուսակտուր,
Թոթափելով քունն երկաթե,—
Ինչպես գաղանը մոնչում ե խավարի մեջ գիշերի,
Յերբ կանչում ե կորած իր եղին,
Ինչպես մոնչում ե գաղանը... գաղան չե՛,—
Ինչպես փողաճները ուազմական
Փչում են փողեր՝
Յերբ բանակը յելնում ե արշավի:
Յեվ կանչից փողի, սիդնալի գոչից,
Ստվերներով սեվաթույր

Ճանկելով խավա՛րը սարսափանար,
Հանկարծ՝ դղրդացին մեռա՛ծ
Ժանգակալ շոգեշարժները ցանկի մեջ,
Յեվ մոռնչներից պատառոտված անդո՛րը
Լեցնելով շարժումներով յերկաթեղեն՝
Շնչեցին ծանրակիր:
Գլանները յերակելով՝
Հզոր շոգին խփեց մխոցներին:
Ու քայլվածքով չուգունե, ձնշելով ոելսերին, —
Աղմուկով,
Յեվ մոնչոցներով խողովակի,
Խավարը նվաճելով,
Յերկաթե բանակով, շարքերով ահոելի
Շարժվեցին շոգեշարժներն՝ սպառնական...
Յերկիրը դղրդա՛ց,
Ցրկինքը լայնացա՛վ, բարձրացա՛վ,
Յեվ լուսինը նահանջող՝
Լուսավորեց
Յերկաթե ապատամբությունը շոգեշարժների:

Այն գիշեր՝
Բանվորները քաղաքը մտան:

ՅԵՐԿԱԹԸ

Քո դեմ՝ մի կտոր յերկաթի,
Ժանդահա՛ր, քաշով ծանրակիր,
Խոնարհի՛ր ականջդ՝ յերկաթին,—
Յեվ նա, վորքա՛ն բան. կը պատմի:
Քարուտ, վայրենի, հի՞ն ու հին,
Քո դեմ, կը կանգնեն սարե՛րը հանկարծ
Ծոցերումն իրենց, ջղերը հանքի,
Սքողուն մի կյա՞նք՝ խորքերում:
Կը խփես յերկաթին դու,
Թափահար՝ նա, կը հնչի՛,—
Արթնացման մասին իր՝ քլունդի տակ,

Գործարանի՛,
Հնոցի՛ մասին մետաղահալ,
Յեվ կրակում՝ տենդոտ տառապանքի:
Կը ցնցի՛ քեզ, տնքոցը յերկաթի,
Ու դու, կը գնա՛ս այդ զնգոցով,—
Բոնած մեծ ճամբան սյունաշար,
Հինավուրց վաղիմիրկայով՝ Միքի՛ր:
Կը բացվի դա՛շոը կովի,—
Յերախնե՛ր թնդանոթի, ոռւմբեր, սվիններ,
Իսկ դաշտում՝ խրձե՛ր մարդկանց,
Գալարքի՛, հառաչանքի՛, արյա՞ն մեջ:
Կերերա՛ս բեռան տակ յերկաթի,
Յեվ, խելահեղ՝ հին ստրուկն ինչպես՝
Դո՛ւ, յերկաթը՝ վորպես դաժան աստծու,
Հուսաբեկ՝ կանիծե՛ս:
Յեվ կը տեմնես գծե՛ր ուղիղ,
Իսկ գծերով՝ դեպի հեռո՛ւն կապույտ՝
Հապճեպ գնացքների
Վա՛զը գիսավոր և մեքենական:
Վոտքի տակ, տրովում ե ծով,
Ու նավերը յերկաթե՝
Չուգունե մոռնչով փոթորկված,
Հեռանո՛ւմ են տարածքի մեջ կապույտ:
Կը բոնկի, կը վառվի՛ ծիածանի գույներով
Հա՞նքը՝ ձեռքիդ տակ,
Յեվ կը կանգնե՞ն հարթավայրերի վրա գորշ՝
Քաղաքնե՛ր յերկաթա - բետոն:
Կը լարվե՞ն մկանները,
Կը յերակվի՛

Մարմի մեջ հանքային արյուն,
Յեվ դուռ, վճռական՝
Կարապի վրա յերկաթե,
Կը սլանա՞ս՝ բարձունք:
Յեվ այնտեղից,
Կանչով պրոպե՛լլերի,—
Կը կանչե՞ս, կը ճշաս, կը յերգե՞ս՝
Յերկաթե զորության մասին քո,
Յեվ մտքիդ մասին՝ հանքապեղ:
Քո դեմ՝ մի կտոր յերկաթի,
Ժանգահար, քաշով ծանրակիր,
Խոնարհի՛ր ականջը քո,—
Լսի՛ր յերկաթին,
Յեվ քե՛զ՝ մարդուն յերկաթե,
Փա՛ռքը յերկաթե՝ յերգի՛ր:

Ն. ՊՈՂԵՏԱՅԵՎ

ԼԵՆԻՆԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Թարգմ. Վ. ԶԵՆԴ

Լենինի պատկերը դեռ չկա,
Անցյալը չի ծնել ու չունենք.
Գալիք դարերը գուցե տան
Պատկերը նրա անավարտ:
Վոչ կտրիչ, վոչ գրիչ, վոչ վրձին
Չեն կարող վողջ աշխարհ ընդգրկել,—
Աշխարհ, — վոր յեռում ե այդ զլում,
Երակներում հզոր տրոփում:
Յեվ ո՞վ ե վոր, — զինված մտքի
թոփչքով—
Պիտի դարձնի անմատչելին մատչելի՝
Իմաստները—աչքերի հետ անքակտում,
Տա հայացքը, վոր դարերն ե
թափանցում:

Ե. ՎԵՐՀԱՐԻՆ

ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ

Թարգմ. Գ. Ա.

Այստեղ՝ ուր հրապարակում, սուրն ե գելիոտինի,
Ուր փողոցներով ճեղում ե բոթականչն ազատ,—
Տենչանքները թռչում են ցնորված:

Ծեծվում են թմբուկներ՝ հավաքել վերավորանքները յեղած,
Նղովը թույլերի՝ փոշունկեց.
Ծեծվում են հավաքի՝ թմբուկները գանգերի մեջ մարդկանց:

Չրքերբատը՝ հինավուրց զանգատան,
Նայում ե ինչպես աչք՝ գիշերվա յերկնքից մռայլոտ.
Ահա, հնչում ե ժամը կանխորոշ:

Տանիքներին, պոռթկացին բոցերը վրիժոտ,
Յեվ քամին, ոձի խայթոցները նրանց,
Վարում ե ինչպես գիսակներ արնամած:

Բոլո՛ր նրանք, ում հուսահատությունը—հույս ե,
Ում համար ուրախություն չկա, հուսարեկումից բացի,—
Խավարից յելնում են լույսին:

Անհաշիվ քայլերի գոփյունն աճող,
Ավելի, ավելի՝ աղմկոտ, շվաքների միջից չարագուշ,—
Վողողում ե ճանապարհը դեպի գալիք:

Զեռքերը պարզված, պատառոտ ամպերին,
Ուր հանկարծ, սպառնալի՝ վորոտը պոռթկաց,—
Վորսում են զիկզակները կայծակի:

Խելառներ, աղաղակեցե՛ք պատվերները ձեր,
Այսոր, բոլորին հասել ե ժամանակ,—
Ինչ թվում եր յերեկը՝ զառանցանք:

Կանչում են... մոտենում... ներխուժում դռներ,
Կռուփներից հրացանի, ճոճվում են փեղկեր,—
Մերկ ե հաշիվ, մեռցնել, մեռնել:

ՈՒ. ՈՅՏՄԵՆ

ՀԱՐՎԱԾԻՐ, ՀԱՐՎԱԾԻՐ ԴՈՒ ԹՄԲՈՒԿ

Թարգմ. Գ. ՀԱՅԿՈՒՆԻ

Հարվածի՛ր, հարվածի՛ր դու. թմբուկ.—
Յեկ փողեր փողհարեք, փողհարեք.
Լուսամուտով ու դռներով, ինչպես անզուսպ
զորագունդ, նե՛րս խուժեք,
Տաճարի մեջ,—աղոթողներն թող կորչե՞ն.
Դպրոցի մեջ,—ուսանողներն թող կորչե՞ն,
Հեռո՛ւ հարսից, դո՛ւ փեսա, ժամանակ չե՛
այժմ լինել հարսի հետ.
Հեռո՛ւ խոփից, հողազործ,
վար ու ցանքի ժամանակ չե՛.
Կատաղորեն վորոտում են թմբուկնե՛րը.
Յեկ զայրագին զիլ փողե՛րն են փողհարում:

Ավելի թո՛ւնդ թմբուկնե՛ր ու փողե՛ր,
Վորոտացե՛ք քաղաքների ժխորի,
անիմլերի աղմուկների վրայով։
Ի՞նչ. ննջողների անկողիններն պատրա՞ստ են.
Ո՞վ պիտ քնի այս գիշեր։
Թողեք այսոր առեվտուրն չարչինե՛ր.
Շահամոլնե՛ր, թող վոր կորչի՝ ձեր շահը,
Շատախոսը պիտ հանդգնի դեռ խոսե՞լ.
Յեկ դո՛ւ, երգի՛չ, դադարեցրու քո յերգը.
Ի՞նչ, փաստաբանը դասարանում
առաջվա պես իր ճա՞ռն և կմկմում.
Դե՛ ուժգին վորոտացե՛ք, թմբուկնե՛ր, ցաք ու ցըիվ
Յեկ փողե՛ր, պայթեցե՛ք, ճչացե՛ք,
Մանկան ճիչը և մայրական լաց
ու կոծը խլացրե՛ք:
Աղոթողը ու լալկանները և ծերունին
սարսափահար—ոն, հեռո՛ւ.
Մինչեվիսկ մեռենե՛րը, վոր անթաղ սպասում են
դագաղի,—թող ցնցվե՞ն.
Ո՞, ճչացե՛ք վայնասունով, զիլ փողե՛ր,
Վորոտա՛, որհասական դու թմբուկ։

Ք. ՀԱՅՈՒԽԻ

ԿՈՄՈՒՆԻՍՏԻ ՑԵՐԳԸ

Մութ ուժեր, մութ գիշերն ու ամպեր—
Անհամբեր,
Վոր իջնեն սեվաթույր ու նսեմ—
Ցես կուղեմ ...
Ցես կուղեմ և տարերք և պայքար
Խելագար.
Չեմ ընկնի թելաբեկ, թելաբեկ,
Ո յերբեք:
Թող խոսեն ծածկամիտ այս գիշեր
Մութ ուժեր,
Նենդամիտ մոտենան մեր դորձին
Վեհածին.

Ցել ընկեր, դու բանվոր, իմ ազատ,
Հարազատ
Ու հսկիր գաղանապահ մութի դեմ—
Միլադեմ:
Փոթորկից խելագար ու հզոր,
Համազոր
Շարքերով վողողենք մեր ճամբան
Միլաբան.
Արնահոս Արեվելք մինչ անահ
Լուսանա—
Հաղթական շեփորներ թող հնչեն,
Դողանջեն...
Թող հնչե՞ն թող հնչե՞ն լուսաբեր
Շեփորներ,
Նոր—կյանքի մեծ կռվին՝ ոն, վակենք
Դեպի զենք,
Ցել ընկեր, մեր գործի վեհ զինվոր,
Դու բանվոր,
Ալ կարմիր արյունով մենք կերտենք
Մի նոր շենք,
Գերություն ազգերի և կապանք,
Հալածանք
Այս կյանքում առ հավետ խորտակվեն
Հիմնովին...
Մինչ ազատ, հարազատ, բյուր հազար,
Հավասար—
Սովալուկ մարդկության մենք կտանք
Աշխատանք:

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

Ա.ՄԲՈԽՆԻ ԻՄ ԱՇԽԱՐՀԸՀ

Վորքա՞ն ել ուզեմ ձգտել դեպի ձեզ,
Վեհապա՞նձ սարեր,
Ու փարվել մաքուր ձեր ձյունյա կրծքին,
Վորքա՞ն ուզեմ յես
Սլամալ վե՛ր, վե՛ր,
Արծիվի նման հպարտ սավառնել՝
Ելի՛ չեմ կարող, կուսակա՞ն լեռներ,
Յերկիրը թողնել
Վոր խարխափում ե կեղտ ու մուրի մեջ,
Տառապում անվերջ.
Յեվ յես կարիքի աշխարհն եմ ընտրում—
Ճնշված ու լքված,
Ուր վիշտ ու զբկանքն իրար հետ. զբկված՝
Մի յե՛լք են փնտրում:

Յեվ դո՛ւք, վա՛ռ աստղեր,
Վորքա՞ն ել դյուժող,
Սիրտը պարուրող լինի ձեր հմայք,
Վորքա՞ն ել գերեք հոգիս յերազող
Ու ինձ յերկնային տանեք ձեր աշխա՛րհք,
Դարձյա՛լ չեմ կարող.
Կապված եմ կամա իմ մայր հողի հետ.
Հար ու հարատեվ ամրոխի լացը,
Ցավ ու կոկիծը,
Ինձ կոչ են անում, թե՛ արի՛, պոե՛տ,
Մեր վիշտը լացիք,
Մեզ ընկե՛ր դարձիք:

Ո՛, ինչպե՞ս քաղցր ե յերկինք վերանալ,
Վիշտ, հոգս մոռանալ,
Լուսնի փայլի մեջ լողալ, սավառնել,
Աստղերին գրկել,
Բայց և անողոք իրականության
Ուրվականը սեվ,
Վորպես մի ժանտ դեվ,
Մարմնացած ըմբոստ բողոքի նման—
Տալիս ե հրաման.

—Իջի՛ր յերազոտ յերկնային գահից
Կյանքին մոտնալու,
Նրան պարտք ունիս, հարկ ունիս տալու:

Ու պիտի իջնեմ...

Զղերս կապված նրա ջղերին,
 Մի այլ ճանապարհ
 Գոյություն չունի յերբեք ինձ համար:
 Յեվ վորքա՞ն դյութող լինի ձեր հմայք,
 Յերկի՞նք ու աստղեր,
 Կա' մի քրտնալի կարիքի աշխարհք
 Ճնշված ու լքված՝
 Նրան եմ ընտրում,
 Այնտեղ վիշտ, զրկանքն իրար հետ զրկված՝
 Մի յե՛լք են փնտրում...

ՍԻՐԱՆ

*

Հսկա խաղույկներն են
 վառվում, վառվում ամեն տեղ
 և հեռվում,
 Սեվ ու շիկացած լեզվակներ ներում...

Մոայլ դաժան տիեղերքից,
 Անցած տանջված կյանքից
 Ով ես դու,
 կա՞նգ առ.
 Ժամդ եկավ
 կանգ առ:

Ներկան մերն ե հիմա.
 Վոչ առաջ,
 վոչ ել յետ,
 Ել չունես դու ճամբա...
 Սոսկում ես, դողդողում,
 Փշրվում ես, գալարվում,
 Բայց չունես դու ճամբա,
 կանգ առ,
 „Fars“-ութ կյանքիդ
 մահը առ,

Շարան-շարան
 ու հանգիստ

Շտապ, շտապ
 ու հաստատ

Իրար յետեվ ու մեկ մեկ
 պատանի ուժերն են
 գալիս,

Բաց արեք ճամբան:

Հսկա ալիքն ե փոթորկում,

Ջրիկ բյուրեղն ե աճում,

Ելեկարիկ ատոմն ե

գարսվում,—

Տարածության վանդակներ
 կազմում.

Քառորդ դար ապրած

Հսկա ուղիղն ե

խոսում,

Անմանների սանդուխտներով
 կինն ե բարձրանում:

Գալիս են, գալիս են
 նըանք
 Ուժեղ թափով,
 Լայն կուրծքով.
 Աշխատանքի հաճոյքն ե
 տիրում,
 Առողջ իմաստն ե
 նըանց բյուրեղ
 սրտերում:
 Վառվող յերակներ
 պայթող ուժեր
 Դարսում են
 գարսում,—

Տալինի ամրոցն են
 շինում:

*

Հսկա խարույկներն են
 վառվում,

Վառվում ամեն տեղ
 և հեռվում,

Կարմիր բոցն ե հրդեհում
 պլատվում

Սեվ ու շիկացած լեզվակներ նետում:

Վ. ԶԵՆԴ

*

Դարերով լռած զանգերը մեծ-մեծ հնչում են նորեն,
Անցած աշխարհի զանգերը անհայտ
Հուժկու ձեռներից շարժվում տարորեն,
Սանձարձակ արշավ ու արհավիրքի
Լուրեր են բերում, փռում ամենուր...

Հազարամյակներ, կորած շիրիմներ,
Դարերով անհայտ ծածկված շիրիմներ
Բացում են նորից խորունկ խորշերը —
Ազատ ուղիներ գալիք արշավին:

Ու հոգիս, կասես, մեծ արհավիրքի
Արձագանքն հզոր, անհանգիստ, ըմբոստ,
Ուղում ե նետվել գիրկը մըրիկի,
Ուղում ե տեսնել սոսկումը յերկրի,
Ուղում ե ապրել արհավիրքը մեծ...

ՅԵ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՊԱՏԿԵՐԱՍՐԱՑՈՒՄ
Ը ՃԱԿԱՏԱԳԻՐ Ճ

Կանգնել ենք ու դիտում ենք դեմքդ հսոր-
յա: Հին ե, հին ծնունդը քո դարեվոր:

Կուշտերը քեզ ծնունդ տվին: Քո «զորությու-
նը» աիրողները նվիրագործեցին... մեզ, միմի-
այն մեզ համար:

Կենսամերժ պոետները լալկան, յերգեցին
քեզ դարեղար:

Յերերուն նկարչի հիվանդ հոգին քեզ պատ-
կերեց ու դարձար դու պաշտամունքը կույրերի:

Բարձունքում, մշուշների միջից գլուխդ
դուրս ես ցցել հաղթական ու քամահրանքով դի-
տում ես տարածություններն անսահման:

Հայացքդ սառն ե, դաժան ու հեղնող։ Դու
խորհրդավոր գալիքն ես կույրերի...

Ստորեվ, յերկրի վրա, խոնվում ե բազմու-
թյունը հեգ մարդկանց՝ հայացքնին աղեւսով քեզ
ուղղած։

Դողդոջուն ձեռներ են պարզված քեզ։ հըր-
հըրում են իրար, բոթբոթում, մաքառում, ըն-
կածներին վոտների տակ տրորում անխնա...

Քեզնից բախտի շող, յերջանկություն են
մուրում, արտասվում ու խորտակվում ակամա։

Այսոր մենք կուռ շարքերով պայքարի յենք
յելել համարձակ։ Քեզնից ժպիտ չենք հայցում,
վոչ ել հաղթանակ, վորպես մուրացկան։

Մենք ենք մեր ճակատագիրը։ Ու բազուկ-
ները մեր հզոր, վոր կտան մեզ հաղթանակ։

Աքցունքապաշտ պոետների դու հզոր «Fatum»
տիեզերքում հրդեհներ ունենք ծավալվող, վոր
պիտ լափեն գոյությունը քո ապիկար։

Այսոր խիզախ յերգերով վճռական մարտի
յենք յելել վստահորեն ու կոխկոտում ենք պաշ-
տամունքը քո զագիր։

Մենք ենք մեր ճակատագիրը։ Ու բազուկ-
ները մեր ջոտ, վոր կպարգեվեն մեզ հաղթա-
նակ ու հարատեղ բախտի նոր որեր։



ՀՀ Ազգային գրադարան



NL0167988

ԳՐՈՂԵՏԱՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԼՈՒՅՍ ԿՀ ՏԵՍՆԵՆ

2.	ՅԱԿՈՒԲՈՎԾԿԻ. — Աշխատանքը և գեղեցկությունը
3.	Վ. ՎԱՆԴԵԿ. — Գեղարվեստագետը և դասակարգը
4.	ԼՅՈՇԿՈ. — Շղթաներ
5.	ԹԱՐՏԻՐՈՍՅԱՆ. — Նախորյակին
6.	ԵՐԵՆԲՈՒՐԳ. — Կոմունարի ծխամորճը

Դրան՝ Մոսկվա, Լեոնтьևսկի պեղ. 16, կա. 20
Группа пролетарских писателей „ГОРН“